ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ

(ՀԵՐԹԱԿԱՆ) ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑՉԻՆ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հարց	*Պատասխան*
1) Ի՞նչ սկզբունքով ներկայացնել վերապատրաստման գործընթացը կազմակերպելու համար սեփականության կամ վարձակալության իրավունքով օգտագործվող տարածքի մասին տեղեկություն՝ առնվազն 1 ուսումնական խմբի (25-30 անձ) համար:	• *Եթե հայտը ներկայացնում է ուսումնական հաստատությունը, ապա կարող է ներկայացնել ուսումնական հաստատության տարածքը (համաձայն ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու մասին կանոնադրությամբ սահմանված դրույթի), իսկ այլ կազմակերպություն ներկայացնում է տարածքի վարձակալության կամ վարձակալության համաձայնության կամ սեփականության, ինչպես նաև տարածքի անհատույց տրամադրման վերաբերյալ փաստաթղթեր:* • *Եթե վերապատրաստման դասընթացներն իրականացվելու են հեռավար ձևաչափով, ապա հայտում այդ հատվածը պետք չէ լրացնել:*

2) Եթե վերապատրաստող կազմակերպությունը ներկայացնում է մեկ խմբի համար տարածք ունենալու մասին փաստաթուղթ, և հետագայում պարզվում է, որ խմբերը ավելին են, ինչպե՞ս է կարգավորվելու տարածքի հարցը:	• *Սկզբում կազմակերպությունը կարող է ներկայացնել 1 խմբի (25-30 հոգու) համար տարածք ունենալու մասին փաստաթուղթ՝ նշելով ավելի շատ խմբեր ունենալու դեպքում համապատասխան տարածքի տրամադրման հնարավորությունների մասին: Նույնը վերաբերում է նաև աշխատակազմին:*
3) Ի՞նչ բովանդակային կառուցվածք պիտի ունենա վերապատրաստման մոդուլը: */ուսուցիչների վերապատրաստման ծրագրի բովանդակությանը համապատասխան ձեռնարկ (մոդուլ), ուսումնանյութական բազա, կահավորանք, ՏՀՏ միջոցներ, սարքավորումներ/*	*Հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստման մոդուլը պետք է ունենա հետևյալ բովանդակային կառուցվածքը՝* 1. ***Առարկայի մասնագետի մասնագիտական զարգացման նպատակը և խնդիրները*** *Այստեղ պետք է ներկայացնել այն գիտելիքները և կարողունակությունները, որ զարգացվելու են վերապատրաստման ընթացքում:* 2. ***Թեմաների վերջնարդյունքները*** *Այստեղ պետք է ներկայացնել, թե ի՞նչ վերջնարդյուներ են անհրաժեշտ ապահովել յուրաքանչյուր թեմայի նպատակներին հասնելու համար: Վերջնարդյունքները պետք է լինեն չափելի:* 3. ***Թեմաների ուսումնասիրության արդյունքների գնահատման սկզբունքները*** *Այստեղ պետք է ներկայացնել թեմայի ուսումնասիրության արդյունքում ուսուցիչների գիտելիքների և հմտությունների գնահատման եղանակները (թեստ, ռուբրիկ և այլն): Կարևոր է թեմայի ուսումնասիրությունից առաջ իրականացնել ուսուցիչների գիտելիքների և հմտությունների նախնական գնահատում: Գնահատումը ըստ բաղադրիչի թեմաների հնարավորություն է տալու որոշել տվյալ բաղադրիչի համար տրվող կրեդիտի չափը:* 4. ***Վերապատրաստման ծրագիրը*** 5. ***Վերապատրաստման թեմատիկ պլանը***

	6. Վերապատրաստման թեմատիկ պլանով սահմանված թեմաների բովանդակությունը, բաշխման նյութերը *Այստեղ պետք է ներկայացնել վերապատրաստման բովանդակությունը՝ ըստ օրինակելի ծրագրի թեմատիկ պլանի:*
4) Վերապատրաստող մասնագետների ընտրության ի՞նչ չափանիշներ կան:	• ***«համապատասխան բարձրագույն մասնագիտական (առարկայական) կրթություն և վերջին 5 տարում՝ առնվազն 2 տարվա ընթացքում վերապատրաստումների մասնակցության փորձ՝ ղեկավար կամ մանկավարժական կադրերի պատրաստման կամ վերապատրաստման ոլորտում»*** *դրույթը ենթադրում է, որ եթե մասնագետը 2016-2021 թվականների ընթացքում վերապատրաստում չի իրականացրել, ուրեմն չի կարող հիմա վերապատրաստող լինել:* • *Վերապատրաստման փորձը դիտարկվելու է նաև անձի աշխատանքային նկարագրի առումով՝ (կանոնադրության 93. կետի համաձայն՝ Առարկայական կամ տարրական կրթության մեթոդական միավորումը (7) ուսուցիչներին (դասվարներին) հաղորդակից է դարձնում մանկավարժության նորագույն նվաճումներին, կազմակերպում է սեմինարներ, մանկավարժական-մեթոդական ընթերցումներ) կամ պարտականությունների մեջ ընդգրկված լինելու՝ որպես հիմնական պաշտոնային պարտականություն և ծրագրային փորձառության:*

5) Ի՞նչ պետք է իրականացնի կազմակերպությունը հետևյալ փուլերում՝ *1) ապահովել ուսուցիչների վերապատրաստման թեմատիկ, ուսումնական, պլան-ծրագրերի, թեստային առաջադրանքների, պարապմունքների ժամանակացույցերի մշակումը.*	• *Այս փուլում մոդուլը չի ներկայացվում, բայց կազմակերպությունը պետք է տա թեմատիկ պլանով ներկայացված թեմաների վերջնարդյունքները, որոնք ավելի մանրամասն հետագայում կներկայացնի մոդուլում: Դրանով կազմակերպությունը կներկայացնի առաջարկվող վերապատրաստումների համապատասխանությունը ծրագրին և չափորոշչին, հնարավորություն կտա ուսումնական հաստատություններին՝ հասկանալու իր կազմակերպության ուժեղ կողմերը և հաշվի առնել դա կազմակերպությունը ընտրելիս:* • *Վերապատրաստման ծրագրում ժամերի փոփոխություն չի կարող կատարվել :* • *Վերապատրաստող կազմակերպությունը կարող է լրացուցիչ թեմաներ ներդնել ծրագրի մեջ, բայց դրանք ներկայացնել լրացուցիչ ժամերի ընթացքում՝ առանց դրա համար պետությունից կամ մասնակցից լրացուցիչ վճարներ պահանջելու: Ուսուցիչները իրավունք ունեն այդ ժամերին չմասնակցելու:* • *Մոդուլը ներկայացվելու է վերապատրաստումը սկսելուց առնվազն 15 օր առաջ:*
2) ապահովել վերապատրաստումների գործընթացի հետ կապված կազմակերպչական աշխատանքների պլանավորումը, իրականացումը և դասընթացի յուրացման արդյունքների գնահատումը,	• *Վերևում նշված վերջնարդյունքների կատարումը ստուգելու համար կազմակերպությունը պետք է մշակի իր աշխատակարգը, որը կարող է որպես լրացուցիչ նյութ ներկայացնել մրցույթին:* • *Աշխատակարգը կարող է նկարագրել նաև մոդուլում:*
3) կատարած աշխատանքների վերաբերյալ կազմել և Նախարարություն ներկայացնել ամփոփիչ բովանդակային և ֆինանսական հաշվետվություններ:	• *Այս աշխատանքը պետք է կատարվի ժամանակին, պատշաճ ձևով, որը հաշվի է առնվելու կազմակերպության գնահատման ժամանակ:*

6) Երաշխավորված դասընթացների Ցանկում ո՞ր Դասընթացները կարող են ընդգրկվել, */որոնք՝ 1) ներկայացվում են Հայաստանի Հանրապետության պետական կամ ոչ պետական ուսումնական հաստատության կողմից:* *2) համապատասխանում են ուսուցիչների վերապատրաստման ծրագրի կամ դրա բաղադրիչի բովանդակությանը,*	• *Կարող են ընդգրկվել ԿԳՄՄՆ հետ հուշագրեր ունեցող կազմակերպությունների դասընթացները. օրինակ՝ ներառականության կամ ՏՀՏ մասով:* • *Կարող է Դասընթաց ներկայացնել նաև ուսումնական հաստատությունը՝ բաղադրիչի մի մասով կամ ամբողջությամբ:* • *Չեն դիտարկվելու այն Դասընթացները, որոնք չեն ունեցել ամփոփիչ գնահատում, և ավարտին ուսուցիչներին տրվել են միայն մասնակցության վկայականներ:* • *Դիտարկվելու են միայն այն դասընթացները, որոնք ուսուցիչը ավարտել է ամփոփիչ ստուգմամբ և ստացել է դասընթացը ավարտելու և ձեռք բերած գիտելիքները և հմտությունները նկարագրող վկայական:* • *Այդ դասընթացների համապատասխանությունը վերապատրաստումների ծրագրին ստուգելուց հետո նախարարությունը կարող է դրանք երաշխավորել՝ շնորհելով որոշակի չափի կրեդիտ: Եթե կրեդիտը հավասար է վերապատրաստման բաղադրիչ կրեդիտին, ապա ուսուցիչը կարող է այդ բաղադրիչի վերապատրաստմանը չմասնակցել:* • *Այդ դասընթացները կարող են լինել նաև հեռավար դասընթացներ, որոնք իրականացվում են հայերեն կամ օտար լեզվով: Այդ դասընթացները կարող են լինել անվճար և վճարովի:* • *Երաշխավորված դասընթացին մասնակցելու որոշումը կայացնում է ուսուցիչը: Նա կարող է որևէ դասընթացի չմասնակցել և մասնակցել միայն կազմակերպությունների կողմից կազմակերպվող դասընթացին:* • ***Երաշխավորված դասընթացների ցանկը յուրաքանչյուր տարի կարող է թարմացվել:***

7)Երաշխավորվելուց հետո Դասընթացի վերաբերյալ ի՞նչ եզրակացություն է տրվելու:	• ԿՀՆԱԿ-ի կողմից փորձաքննվելուց և ԿԳՄՍՆ կողմից երաշխավորվելուց հետո Դասընթացի վերաբերյալ տրվելու է եզրակացություն՝ ա) դասընթացի երաշխավորված լինելու մասին, բ) դասընթացի համար սահմանված կրեդիտի չափի մասին:
8) Ի՞նչ ժամանակացույցով է իրականացվելու վերապատրաստումը:	• Կազմակերպությունն ինքնուրույն կազմում է իր վերապատրաստման անհատական ժամանակացույցը՝ հաշվի առնելով վերապատրաստումների ավարտի համար սահմանված ժամկետը:
9) Ինչպե՞ս է կարգավորվելու այլ ուսումնական հաստատությունում իրականացվող դասալսումների հարցը:	• Կազմակերպությունը նախապես պայմանավորվածություն է ձեռք բերում իր ընտրած ուսումնական հաստատության տնօրենի հետ՝ գործընթացը կազմակերպելու համար:
10) Ցանկի ձևավորման կամ համալրման նպատակով Նախարարությունը տարեկան քանի՞ անգամ կարող է մրցույթ հայտարարել:	• Տարվա ընթացքում առնվազն մեկ անգամ: • Երկրորդ մրցույթ կարող է հայտարարվել վերապատրաստումների տվյալ փուլի ավարտվելուց հետո:
11) Որքա՞ն գումար է հատկացվելու մեկ խմբի վերապատրաստման գործընթացը կազմակերպելու համար:	• Մեկ խմբի (30 հոգի) վերապատրաստման գործընթացը կազմակերպելու համար հատկացվելու է 750.000 ՀՀ դրամ:

12) Եթե վերապատրաստումն իրականացնում է ուսումնական հաստատությունը, և նույն ուսումնական հաստատության ուսուցիչը ցանկանում է իր դպրոցում վերապատրաստվել, ինչպե՞ս է կարգավորվելու պայմանագրի հարցը:	• *Ուսումնական հաստատությունը պայմանագիր է կնքում Վերապատրաստում իրականացնող կազմակերպության՝ տվյալ դեպքում՝ նույն հաստատության հետ:*
13) Հարկային պարտավորությունների կատարման վերաբերյալ հարկային մարմինների կողմից տրվելիք տեղեկանքների պատճենները չներկայացնելը կամ թերի ներկայացնելը ի՞նչ հետևանք կունենա:	• *Այս և մյուս պահանջվող փաստաթղթերը չներկայացնելը կամ ոչ պատշաճ ձևով ներկայացնելը հիմք է կազմակերպությունը վերապատրաստող կազմակերպությունների ցանկում չընդգրկելու համար:*
14) Ինչպե՞ս է իրականացվելու Դասընթացի գնահատումը:	*«Կրթության զարգացման և նորարարության ազգային կենտրոն» հիմնադրամը (ԿԶՆԱԿ) կազմակերպելու է՝* • *մասնակիցների հետ հարցազրույցներ դասընթացի ընթացքում,* • *վերապատրաստման մշտադիտարկում՝ թեմատիկ պլանին համապատասխան,* • *մասնակիցների գիտելիքների և կարողությունների ամփոփիչ ստուգում,* • *ուսուցիչների մոտ դասալսումներ՝ դասընթացից առաջ, դասընթացի ընթացքում և դասընթացից հետո:* • *Դասընթացը գնահատվում է յուրաքանչյուր տարի՝ ԿԶՆԱԿ-ի կողմից ներկայացված հաշվետվության հիման վրա: Ելնելով հաշվետվության քննարկման արդյունքներից՝ Հանձնաժողովը որոշում է կայացնում Դասընթացը Ցանկում թողնելու կամ հանելու մասին*